դաշնակցական խորհրդի ամեն վճիռները, իսկ ներկայացնել պարլամենտ այնպիսի վճիռներ, որոնց համար ամբողջութեամբ, իսկ մասամբ միւս չէ կարող պատասխանատու լինել։ Դորանով իշխան Բիսմարկ խախտում է գերմանական սահմանադրութիւնը, որովհետև այդ սահմանադրութեան 5-րդ յօդուածի մէջ ասած է, որ ,,կայսրութեան օրէնսդրութիւնը մշակւում է դաշնակցական խորհրդի և ռայխստագի միջոցով։ Այդ երկու ժողովների միաձայնութեամբ կազմւում է և ընդունւում ամեն մի նոր օրէնք»։

Նոյն նիստի մէջ Րիխտեր յայտնել է իր ճառի մէջ, որ Բիսմարկ խախտելով սահմանադրութիւնը, գիտաւորութիւն ունի պետական ամբողջ ոյժը իր ձեռքը գցել և յայտնել գիտակցաբար Րիխտեր գիտելով պարլամենտի ազատամիտ բոլոր կուսակցութիւններին, հրաւիրեց նրանց թողնել միմեանց մէջ ունեցած բոլոր խտրութիւնները և միանալ իշխան Բիսմարկի հակառակութեան ընդդիմանալու համար։

Րիխտեր միակ մարդ է գերմանական պարլամենտում, որ կարողանում է ընդդիմանալ Բիսմարկին, և որի հեգ. խօսքերից և ծանր դատողութիւններից Բիսմարկ վախենում է։

Մինիստր Էյլենբուրգ, որ այժմեան գերմանական մինիստրութեան մէջ միակ ազատամիտ մարդ էր, ստիպուեցաւ հրաժարական տալ իր պաշտօնից։ Նրա տեղը Բիսմարկ նշանակեց մի յետադէմ կղերականի, Պուտկամերին։

Քանի գնում է Բիսմարկ աւելի և աւելի իր ձեռքն է գցում Գերմանիայի կառավարութեան բոլոր թելերը։ Շատերը բացատրում են գերմանական առաջին մինիստրի այդ բռնած ընթացքը նրա ցանկութեամբ կուսակցական դարձնել բոլոր ընդդիմադրական ոյժերը, որպէս զի, հարկաւոր ժամանակ, առանց պարլամենտի համաձայնութեան հարցնելու, կարողանայ նորից պատերազմ յայտնել Ֆրանսիային։ Ֆրանսիան քանի գնում է աւելի և աւելի ոյժ է ստանում և սպառնալի է դառնում Գերմանիայի համար։ Բիսմարկ շատ լաւ գիտէ որ այժմեան ժամանակը շատ յարմար է հետապնդելու իր ձեռքերում անսահման իշխանութիւնը. Ռուսաստանից և Աւստրիայից Գերմանիան այժմ չունի վախենալու, քանի որ երկու պետութիւնների մէջ անխախտ պահպանւում է դաշնակցութիւնը։ Բիսմարկ գիտէ որ եթէ Գերմանիան այժմ պատերազմ յայտնէր Ֆրանսիայի դէմ, նա կարող էր վստահ լինել որ ոչ Ռուսաստանը, ոչ էլ Աւստրիան Ֆրանսիայի կողմը չէին բռնի։ Իսկ Գերմանիայի կողմն էլ չէին բռնի, բայց չէզոք կը մնային։

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Բեռլին, 20 փետրուարի

Զարմանալի է որ դեռ անձնապաշտութեամբ երկիրներում կան քաղաքական անհատներ, որոնց մի պրինցիպ, մի սկզբունք, մի ոյժ, միջնորդ նախանձախնդրութիւն ներշնչելու։ Տարաբախտաբար դարձ են գնում անձնական կեանքի ներքին գործերը, բամբասանք, պասկվիլներ։ Այսպէս էլ լուսաւորված Եւրոպայում, Գերմանիայում և Ֆրանսիայում դարձ են գնում հակառակորդների դէմ նոյն միջոցներ, որ դարձ են գնում աւելի անկիրթ երկիրներում։ Գամբետտայի թշնամիների համար մի որ և է Լուիզ Միշել անձնականագոյն բաներ է տարածում նրա մասին։ Ռոշֆոր պարտում է նրա անձնական կեանքի վրայ մի պասկվիլ «Mademoiselle Bismark» անունով։ Մամուլը և Վէրիտոյ հակապատերազմական լրագրների մէջ հեղինակի կողմն են բռնում,— նրանց անձնական կեանքի մասին իսկ նրանց հասարակական ու խառնակիչների մասին, որոնք ոչինչ կապ չունեն նրանց հասարակական հայեացքների հետ, բամբասանքներով լի բրոշիւրներ են երևում։ Բայց, ի հարկէ, Մանչէնի, Վիրխովի կամ Գամբետտայի դէմ անձնականագոյն բաներն անցում ոչ նրանց, ոչ էլ այն պրինցիպին, որին նրանք ծառայում են, չեն կարող շատ վնասել։ Նախ, որովհետեւ նրանք իրանց քաղաքական և հասարակական մեծ ոյժ ունեցող անձնաւորութիւններ են, երկրորդ որովհետեւ նրանց երկիրների մէջ ժողովրդի մեծամասնութիւնը հասկացող է. կարող է հենց պատահել որ մի Լուիզ Միշել Գամբետտայի մասին կեղտոտ բաներ է տարածում, ամբոխը նրան պատասխանում է՝ «այսու անձնայինս». Գամբետտան աւելի է սիրել, քան թէ գուշը, ինչպէս և եղել է նախկում փորձի մի հրապարակական ժողովի մէջ։

Բայց աւելի անկիրթ, զարգացման աւելի ստոր աստիճանի վրայ կանգնած մի հասարակութեան մէջ հակառակորդների դէմ դարձ գործող նոյն միջոցները աւելի վտանգաւոր հետեւանքներ ունեն, նախ՝ որովհետեւ մտաւորապէս և բարոյապէս ստոր աստիճանի վրայ կանգնած հասարակութիւնների մէջ շատ նշանաւոր մարդիկ էլ չեն կարող լինել, այլ հասարակութեան զարգացման համեմատ լինում են և հասարակական գործիչները. Նրանք լինում են հասարակ աշխատողներ, թէև գուցէ գաղափարի, սկզբունքի անկեղծ կերպով նուիրուած մարդիկ. երկրորդ՝ որ անկիրթ երկիրներում հասարակական կարծիքը դեռ զարգացած չէ, ինքն մեծամասնութիւնը դատել դեռ ևս ատակ չէ, չէ կարող ջոկել սկզբունքը անձնաւորութիւնից։

Մի անկիրթ հասարակութեան մէջ յայտնւում է մի մարդ, որ, թէև շատ համեստ գործող է, գուցէ պակասութիւններով լի է, համենայն մի աշխատող է, առաջական ընդունակութիւններ ունի մարդ է,— լինի նա մանկավարժ, վիպասան, բանաստեղծ, խմբագիր, բժշկական գրող,— ի հարկէ, այնտեղ անձնայինը բարձր է իրան չչնչասող հասարակութիւնից։ Այդ անձնական մարդ սկսում է իր գործունէութիւնը,— խոչոր գանւում են մարդիկ, որոնք աշխատում են նրա անունը կոտրել, արատաւորել, նրա անձնական, ընտանեկան կեանքի վրայ ցեխ գցել… Նրա համարը ինչ է լինում։ Ամբոխը, անդատաստան լինելով ջոկել սկզբունքը անձնաւորութիւնից, սկսում է անձնաւորութեան հետ,— որ գուցէ անմեղ, թէև իր գաղափարին անկեղծ նուիրուած և նրան անկեղծ ծառայող անձնաւորութիւն է,— անարգանել և նրա յայտնած գաղափարները, որոնք ճիշդ, գեղեցիկ, առողջ, ազատական գաղափարներ են։ Այդպիսով խայտառակւած անձնաւորութեան հետ այնտեղ ծաղրւում խայտառակւում է և նրա յայտնած գաղափարն էլ։ Դրանով ինչ է չարչարւում ամեն մի սկսած գործ, ամեն մի օգտաւէտ հասարակ գործունէութիւն, ամեն մի գաղափար անպտղաբեր է լինում այն հասարակութեան մէջ, որ նոր է սկսում հասարակական կեանքով ապրել, որ դեռ նոր զուրկ է իրեն դերերից, զուրկ է հիմնաւոր հասարակական զարգացումից, հիմնաւոր հասարակական կրթութիւնից։

Այդպիսով ոչինչ գործ չէ կարելի սկսել մի անկիրթ հասարակութեան մէջ, որովհետեւ ազդող է որ իւրաքանչիւր գործող անձն որ և է անձնական պակասութիւններ կունենայ, իսկ խայտառակելով անձնապէս նրա անձնական պակասութիւնները, ամբոխ ժողովուրդը սկսում է արհամարհել և անարգանել այն գաղափարն էլ, որ յայտնում է նոյն անձնաւորութիւնը։

Իսկ եթէ հասարակական գործողի պակասութիւնները շատ խոշոր էլ չեն, դժուար չէ նրանց խոշորացնել։

Անկիրթ հասարակութիւնը իր չոր կոպիտ անկիրթ և կեղտոտ ինտրիգանների անհանդուրժ, առանց յարգել չէ կարող, անհասարակ էլ ընդունակութիւն է կորցնում դատելու և ջոկել ի յանձն պատուի արժանի մարդկանց. նա բոլորին էլ մի կողմի մէջ է ածում, կամ ինչպէս գերմանացին ասում է «wirft alle zusammen in einen Topf», և ամեն մի անպիտան անկիրթ նոյնպէս անկիրթ և անզգամ ամբոխով ինտրիգանների իրան էլ նրան համար է հասկանում, իսկ նրա ձեռը ամբոխով իրան ինտրիգանների պատահմամբ է կարծում։ Եւ իրաւունք ունի. երկուսի մասար և բարոյական մակերևոյթը մէկ մէկից ոչինչով չէ տարբերւում, երկուսի աշխարհահայեցողութիւնը նոյն է. երկուսն էլ անընդունակ են մի որ և է, թէկուզ ամենահասարակ աշխատողին յարգել, նրա անձնականը ջոկել հասարակականից։ Երկուսի համար էլ ամենամեծ զուարճութիւն է պատահում յաջող առել որ եթէ ուղենան, կարող են մարդուն անպատուել, ցեխի մէջ գլորել, և այդ անելուց յետոյ իրանք համոզուած են թէ իրանց անձը աւելի է բարձրացել, թէ իրանք յաղթող են, որովհետեւ ուրիշին կարողացան արատաւորել։ Ասենք, ես մէկի հասարակական գործունէութիւնն եմ քննադատում ու գնահատում,— իսկ նա իմ անձնական պատիւն է վիրաւորում և եթէ նա համոզիչ է գրքեր մէջ, անպատճառ կողմնակիցներ կունենայ և իմ պատիւը կը նսեմացնի։ Կամ էլ, գուցէ, որ ես կարող եմ ապացոյցներ բերել նրա հասարակական գործունէութեան վնասակարութեան մասին, բայց նա էլ նոյնը կանի իմ անձնական կեանքի վերաբերութեամբ և երբ խելական ապացոյցներ չի ունենայ, նա կը յերիւրէ հնարաւոր ինտրիգաթիւններ, կը հնարի փաստեր, կը շարադրի կեղծ նամակներ… Նրա համար ոչինչ աւելի բան չը կայ. իսկ միամիտները, որոնք բազմութիւն են կազմում, անշուշտ նրա կողմը կը հակւեն։

Մի հասարակութիւն որ դեռ չէ հասկանում որ անպատուել և արատաւորել նոյնպէս մեծ հասարակական յանցանքներ են, որքան գողանալ և սպանել,— այդ տեսակ հասարակութիւն դեռ իր ոտքերի վրայ հաստատ կանգնել չէ կարող։ Ազատութիւններ վայելելու համար էլ պատրաստութիւն է հարկաւոր. ոչ թէ միայն գիտութիւնը, բայց և բարոյական դաստիարակութիւնը պէտք է ամբոխի մէջ բարձր մակերևոյթի վրայ հասցնել. իսկ բարոյական դաստիարակութիւնը կարող է միայն ընտանիքը տալ։

Բայց վերջ եմ դնում իմ փիլիսոփայութիւններին։

Նորերումս հրատարակւեցաւ մի նոր գիրք Ֆրանսիական լեզուով,— դա մի ճանապարհորդութիւն է Կովկասում. Հեղինակը մի պարոն Կեօխլին—Շվարց է (Koechlin—Schwartz) երևի մի էլզասցի, գոնէ ազգանունը էլզասական է. Նիւթը պարունակում է իր մէջ բաւական խոշոր անճշտութիւններ մեր երկրի վերաբերութեամբ։ Զարմանալի է, ինչո բան չէ մի օտար երկրի հետ ծանօթանալ և նրա մասին կարճ ծանօթութիւններից յետոյ ամեն կողմից ճիշդ գաղափար կազմել։ Երբ վերջացրած կը լինեմ կարդալ այդ գիրքը, կաշխատեմ մի փոքրիկ նկարագրութիւն ուղարկել «Մշակի» համար։

Այս մօտ օրերս «Deutsche Litt. Zeitg» լրագրի մէջ տպագրւեցաւ մի քննադատութիւն «Die Hungersnot in Türkisch-Armenien» վերնագրով բրոշիւրի մասին։

Անդրէաս Արծրունի

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«La Justice» լրագրում կարդում ենք, որ նկարիչ Վերեշչագին, որ նշանաւոր եղաւ Փարիզի վերջին նկարչութիւնների ցուցահանդէսում իր նկարած «Հնդկական» ֆրանսիական կառավարութեան յանձնարարութեամբ պիտի պատրաստի իր նկարչութիւններով կազմւելիք քաղաքային խորհրդարանի մեծ դահլիճի առաստաղը։

⁂

«Русская Газета» լրագիրը պատմում է հետեւեալը։ Ռուսաստանի մի յետ ընկած գիւղի բանտում երկու բարեգործներ չէր տեսել գիւղացիներին. Նրանք դէպ էին այդ պատճառով քահանայից և փնտրեցին նրա մասին դատապարտելու հոգևոր իշխանութեանը. Քահանան այդ խնդրում և մի կիրակի յայտնել ժողովրդին, որ դեռ [illegible] ժողովրդական [illegible] [illegible] «Ամենքի ժողովուրդ, գիւղի քահանան ժողովրդին երբ [illegible] [illegible] [illegible] Աստուծոյ [illegible] [illegible] «Ամեն, գիւղի նա [illegible] [illegible] [illegible] մէջ այդ գիրքը [illegible] [illegible] Այդ լսելով, ժողովուրդը սկսեց փախչել եկեղեցուց ով ինչ դռնից կարողացաւ. Շատ ժամանակ չանցաւ և քահանայի հրամայեցին իր պաշտօնից։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մարտի։ Երէկ կայսերական ընտանիքի անդամները երդում տուեցին հաւատարիմ հպատակութեան մէջ կայսր Աղէքսանդր III-ին։ Այսօր երդում պիտի տան զինւորները և պալատական աստիճանաւորները։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մարտի։ Մանրամասնութիւններ եղեռնագործութեան մասին։ Սովորական կիրակիայ զինախաղից յետոյ Միխայլովեան մանէժում, կայսրը իր սովորութեան համեմատ գնաց Մեծ Իշխանուհի Եկատերինա Միխայլովնայի պալատը, որտեղ նա այդ օրը հաճել էր խմել։ Այդ ընթրիքից յետոյ Թագաւորը հրամայեց ձիաւորին ուղեւորել դէպի Զմեռնային պալատ։ Կառքը, որի մէջ նստած էր կայսրը, ուղեւորվեց Ինժեներական փողոցով Միխայլեան թատրոնի մօտով, յետոյ անցաւ Եկատերինեան ջրանցքի եզրը։ Կառքի ետեւից, բալխիների մէջ նստած, ուղեկցում էին Թագաւորին վեց հոգի թիկնապահներ։ Նոյնպէս ուղեկցում էր պոլիցեյմէյստեր գնդապետ Դվորժիցկին։ Ճանապարհը անցնում էր նեղ փողոցով որ տանում է Մեծ Իշխանուհու այգու պարտէզի և Եկատերինեան կանալի փողոցի միջև. փողոցում անցնում էին և կանգնած էին մի քանի մարդիկ։ Կառքը դեռ չը հասած թատրոնի կամուրջին, յանկարծ լսւեցաւ մի սարսափելի պայթիւն։ Ձիաւորը կանգնեցին։ Դվորժիցկի գնդապետը վազեց Թագաւորի կառքի մօտ։ Կայսրը բաց արաւ կառքի դուռը, դուրս եկաւ կառքից հարցնելով թէ ի՞նչ է պատահել։ Առաջին պայթիւնը, որ գցւած էր դէպի կառքը, միայն կառքի ետևի մասին շատ վնասեց, իսկ կայսրը բոլորովին անվնաս էր մնացել։ Այդ ժամանակ երևացին ծովային երկու նաւաստիներ, որոնք բռնած ունէին մի մարդու, կարմրագոյն մազերով և կարճ երեսով. չարագործին բռնեցին յանցանքը կատարելու րոպէին, նոյն իսկ այն ժամանակ, երբ նա ռումբ էր գցում։ Կայսրը ուզեցաւ գիտել նրան և հարցրեց ինչպէս է նրա անունը. սա ասեց իր անունը։ Թագաւորը հրամայեց որ ցոյց տան նրան պայթիւնի տեղը։ Հազիւ արաւ նա երկու երեք քայլ գնդապետ Դվորժիցկու ետևից և գցւեց մի նոր ռումբ ձգւեց։ Նրա ոտների տակ ընկնելով նա արտասանեց միայն ,,օգնեցէք" բառը։ Լսելով պայթիւնը, Մեծ Իշխան Միխայէլ Նիկոլայեվիչ, շտապեց Մեծ Իշխանուհի Եկատերինա Միխայլովնայի պալատից հասնել Թագաւորի ետևից [illegible]

Խմբագիր—Հրատարակիչ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ